«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՍԱԼ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱԼ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա ՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Զաքարյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տվեք երեխային հետաքրքրասիրություն։ Գիտելիքը նա կգտնի ինքը։ Անատոլի Գին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Ճիշտ է, այսօր մենք մի քիչ շփոթված ենք, որովհետև աշխատանքը համարժեք չի գնահատվում: Բայց միևնույն է, մեզնից յուրաքանչյուրը իր աշխատանքը պետք է պատշաճ կատարի: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակեն սանին, օրինակ ծառայեն, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Ոչինչ, որ նրանք երբեմն ժամանակակից լինելու համար երևութական պատմուճաններ են հագնում, երբեմն աղավաղում են որոշ ազգային արժեքներ, երբեմն էլ աղավաղված հայերենով են խոսում: Նրանց զգալի մասը տառապում է օտարամոլությամբ: Երբ ներքին հարստություն ձեռք բերեն, նրանք կհասկանան իրենց սխալը, և դա անպայման կուղղվի: Այսօր նրանք մի քիչ մոլորված են, անցման շրջանի մոլորություն է. չէ՞ որ կյանքում շատ արմատական փոփոխություններ, ճամփաբաժաններ եղան, ու հիմա նրանցից յուրաքանչյուրը պիտի գտնի իր արահետը: Եվ բոլորը չէ, որ ի վիճակի են դա անել: Մենք նրանց պետք է ուղղորդելով, առաջնորդելով սովորեցնենք: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Ուստի ավելի է կարևորվում դպրոցի,

մանկավարժի դերը հասարակության մեջ:Մատաղ սերունդը այդ գործընթացների, այդ արժեքների ժառանգորդն ու կրողն է: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան կարողություններ զարգացնել և իրացնել խնդիրները:Հատկապես կարևոր է որ պատանիները կարողանան գնահատել գիտական մտքի զարգացումները,արժևորել տնտեսական հաջողությունների նշանակությունը, մեր երկրին սպառնացող վտանգներն ու մարտահրավերները,և իրենց դերը հայրենիք կերտելու գործում:Այսպիսով անհրաժեշտ է վերաիմաստավորել ուսուցչի դերը:Նա պիտի ինքնակրթվի, ինքնակատարելագործվի, որպեսզի նպաստի հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝զարգացնելով արժեքային անհրաժեշտ որակներ: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությանը՝պահանջելով ուսուցման և մեթոդների վերանայում և արմատական բարելավում: Մտավոր կարողությունների բարձրացումը, հանդիսանալով երեխաների ինտելեկտուալ ոլորտի բաղադրամաս, մանկավարժական ներգործությունների միջոցների և մեթոդների հիմնավորում, կազմում է վերջին տարիների գիտական հետազոտությունների զարգացման էական գծերից մեկը::Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Շատ կարևոր է, որ այսօր մարդը կրթության միջոցով ձեռք բերի որոշակի արժեքներ և հմտություններ, որոնք նրան հնարավորություն կտան տարբեր մշակույթների հետ շփվելիս և տարբեր մշակութային միջավայրերում հայտնվելիս և՛ պահպանել սեփական ինքնությունը, և՛ ձեռք բերել մյուս մշակույթին բնորոշ, բայց իր համար ցանկալի արժեքներն ու նորմերը: Միջմշակութային շփումներում ցանկալի արդյունքի հասնելու կարևորագույն դիրքորոշումը հանդուրժողականությունն է, որը հնարավորություն կտա խելամիտ վերլուծության շնորհիվ պահպանել սեփական մշակույթի ինքնության արժեքավոր տարրերը և ընդունել այլ մշակույթների ցանկալի արժեքները, նորմերն ու մոտեցումները: Հանդուրժողականությունը արժեք է, ինչպես նշում է Շվեյցերը, այն պետք է իմաստավորվի, վերապրվի սովորողի հոգում, որպեսզի դառնա նրա կենսական արժեքը: Ասվածից հասկանալի է, որ հանդուրժողականության ուսուցումը արժեքային կրթության տարր է,

վերաբերմունքի ու դիրքորոշման բաղադրիչ: Գիտելիքներն ու հմտությունները նույնպես կարևոր են 4 հանդուրժողականություն ուսումնասիրելիս ,բայց նման ուսումնասիրության հիմնաքարը արժեքային մոտեցումն է: Աշակերտներին գիտելիքների փոքրիկ կայծ տալու համար ուսուցիչը պետք է իր մեջ լույսի մի ամբողջ ծով կուտակի: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը:Միասնական էր նաև արժեհամակարգը:Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում:Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Մարդկային ազգի համար չկա խնդիր, որ այնքան կարևորություն ունենա, որքան կրթության խնդիրն է: Դաստիարակությունն է վերացնում թշվառությունը: Այն ցրում է այն ամպերը, որոնք փակում են առաջընթացի ճանապարհը: Դաստիարակությունն է, որ վերացնելու է պատերազմների հնարավորությունները:Հայեցի դաստիարակությունն առաջին հերթին պահանջում է աշակերտների մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի նկատմամբ, պայքարել ազգայինն ու հայրենասիրականն համընկնելի դարձնելու գաղափարի համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Դրանք են՝

●լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող,

●դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների:

Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Զարգացնել պատմական ակտիվ մտածողություն, պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը: Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասարանը, որտեղ կատարել եմ դասապրոցես, նախապատրաստվելով Սոկրատեսյան քննարկման, որը արդյունավետ միջոց է բոլոր սովորողներին քննարկման մաս դարձնելու, միմյանցից սովորելու և ակտիվ լսելու հմտությունները զարգացնելու համար:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, թեստավորում, վերլուծություն և այլն:

Գարեգին Նժդեհն ասում էր՝ «Տո՛ւր հայ մորը թեկուզ քիչ բան, բայց պահանջիր ամեն ինչ, և նա կանի: Տո՛ւր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնորհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը»:

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին, ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը, համոզված էր, որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով. «Ես հավատում եմ ,որ կրթությունը, հետևաբար, ապրելակերպ է և ոչ թե ապագա ապրելու նախապատրաստություն» /Իմ մանկավարժական քույր-1897թ/: Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանորեն և վերլուծելով մտածել, սակայն առաջին անգամ տեսականորեն այն մշակել է Ջ.Դյուին: Իսկ ըստ ռուս հայտնի հոգեբան Ս.Յ. Ռուբինշտեյնի, մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով:

Սովորող-ուսուցիչ հաղորդակցման միջոցով իրագործվում է սոցիալական, բարոյական, մշակութային, գեղագիտական, էկոլոգիական արժեքների փոխանցումն աճող սերնդին: Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնի՝ «Հաղորդակցումը վերաբերմունք է աշխարհի, ուրիշ մարդկանց և ինքն իր նկատմամբ»

Լ.Ս. Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք , որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ , ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ , յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում: Լ.Ս.Վիգոտսկին ապացուցեց, որ մանկավարժությունը պետք է հիմնվի երեխայի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա՝ եկող օրվա վրա: Միայն այդ դեպքում նա

կարող է ուսուցման գործընթացում կյանքի կոչել զարգացման այն գործընթացները, որոնք տվյալ պահին գտնվում են երեխայի «,մերձավոր զարգացման գոտում,,: ,«Մերձավոր զարգացման գոտի,, ասելով Լ.Ս. Վիգոտսկին հասկանում էր, որ զարգացման որոշակի փուլում մեծահասակի աջակցությամբ և առավել խելացի ընկերների հետ համագործակցելով երեխան կարող է ուսումնական խնդիրներ լուծել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այսօր վտանգված է սովորողների ազգային գաղափարախոսությունը և նկատվում է նահանջ ազգային որոշ արժեքներից: Անհրաժեշտ է դպրոցի կրթադաստիարակչական համակարգում բովանդակային հագեցվածություն ազգային մշակութային արժեքներով: Ազգապահպան գործում վկայակոչում ենք հայոց մեծերին և արժեքավոր հղումներով կատարում եզրահանգումներ, նշելով, որ գրեթե բոլոր դարաշրջաններում ժողովուրդը ջանացել է իր ստեղծագործական, իմացական արգասիքով ամրապնդելու ազգային ոգին, հպարտությունը մարդասիրությունը, հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը: Դպրոցի կարևորագույն նպատակն է նոր սերնդի ներքին, բարձր համոզվածության կերտումը, ազգային արժեքների, ավանդույթներին, սովորույթների ձեռքբերումն ու պահանումը:Համաձայն կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանի, կրթության ոլորտում կա մի կարևոր բաղադրիչ, որն անտեսված է համարվում. դա ուսուցչի կողմից ձեռք բերված ուսուցման մեթոդներից և հնարներից զատ, ամենա կարևոր որակներից մեկը հանդիսացող մտածելու կարողությունն է: Այսօրվա ուսուցիչը տեղեկատվություն փոխանցողից, ինչը բնորոշ էր ավանդական կրթությանը, պետք է վերածվի «ճարտարապետի», ով կարող է ստեղծել սովորող. և ինչպես ասել է Ս. Խաչատրյանը «Եթե ինձ հարցնեն, թե որն է կրթության նպատակը, կասեմ՝ սովորող ստեղծելը: Եթե դպրոցական կրթության վերջում չունենք սովորող, այլ մարդ, որի համար այդ գործընթացը դարձել է ամենօրյա գործունեություն՝ անկախ գիտելիքների պաշարից, պարտված ենք»:[1] Գալով եզրահանգման՝ պետք է հավաստեմ,որ յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ պետք է նախ պետական չափորոշիչի համաձայն կազմակերպի իր օրվա պլանը,որը կբխի իր առջև դրված նպատակներից և խնդիրներից, որոնք կհանգեցնեն արժեհամակարգի բարձրագույն արժեքների ձևավորմանը:«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր,

[1] https://aspu.am/hy/content/_serob_khachatryankrtutyan_npataky_sovorogh_steghtseln_e/?fbclid=IwAR3aLAXglie0snuaQ_u-LTQ4n0FcmFTx-q1g3icfLcYtAJ23bg5tZkZDt9Y#sthash.YO2CwhOp.dpuf

իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների

ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից[2]:Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[2]:Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով

[2] Տես՝ Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրում նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ: [2] Տես՝ նույն տեղում, 64 էջ:

դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը:Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական

ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու

կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»[3]:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»[4]:

---

[3] Տես՝ Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с. [4] Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с. Տես՝

Ստորև ներկայացված է դասապլան, որտեղ փորձել եմ ներկայացնել այն դասընթացները, որոնք իրականացվել և իրականացվելու են նույն մեթոդներով, որոնց նպատակն էր հայրենասիրություն դաստիարակելը:

Դասապլան 1

Ուսուցիչ-Զաքարյան Սուսաննա
Առարկա – Հայոց պատմություն
Դասարան – 6-րդ

	●Ներկայացնել Հայաստանի աշխարհակալ տերություն դառնալը, ●Թվարկել առնվազն 2 փաստ Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների և հատվող դրամների մասին:	
Թեմա	Մեծ Հայքի թագավորությունը վերջին Արտաշեսյանների օրոք	
Օգտագործվող նյութեր	Դասագիրք,քարտեզ,դիագնոստիկ մեթոդ, սահիկաշար, նկարներ, մարդուկի մեթոդը:	
Հիմնական հասկացություններ	Արտաշես 2-րդ, Արտավազդ 2-րդ, Տիգրան 4-րդ,Հռոմ և Պարթևստան:	

Տես՝

Դասի նպատակը Ձևավորել, խթանել և զարգացնել գիտելիք	Իմանալ՝ ա) Արտավազդ II-ին հայոց գահին հաջորդել է իր որդի Արտաշես II-ը: բ)Արտաշես II-ի ջանքերով ազատագրվեց Հայաստանը, հատեց դրամներ: գ)Տիգրան IV-ը Ք.ա 2 թ.-ին կառավարեց իր քույր Էրատոյի հետ: դ)Արտաշեսյան արքայատոհմը Մեծ Հայքում կառավարեց մինչև 1 թ.:	
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, ուսուցումը տեղի ունեցավ:	
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ ● Գնահատել Արտաշեսյան արքայատոհմի դերը հայոց պատմության մեջ. ●Ներկայացնել Հայկական հողերի միավորվորումը մեկ միասնական պետությանմեջ,	
Գործողություններ (ժամ) տևողություն Կազմակերպչական մաս (5 րոպե)	Պլանավորված ՈՒԳ Ռազմավարություններ Հաշվառում,տնային առաջադրանքների ստուգում: Կազմակերպել մտագրոհ նախորդ	Առանցքային հարցեր, հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է նպատակին) Ո՞վ հաջորդեց Արտավազդ 2-ին,ի՞նչ իրավիճակ էր

Տես՝

Դասի ընթացք Նախորդ նյութի հարցում (10 րոպե) Նոր նյութի հաղորդում (15 րոպե) Դասի ավարտ (10 րոպե)	նյութի հետ կապված: Դասախոսություն, նկարներ, սահիկաշար, դիագնոստիկ մեթոդ և Վենի դիագրամ: Այս փուլում ամբողջացնել նյութը և Վենի դիագրամի միջոցով համեմատական անցկացնել Երվանդական և Արտաշեսյան արքայատների միջև և առաջադրել քննարկման հարցը:	Հայաստանում Արտավազդ 2-ի մահից հետո,ու՞մ հետ երկիրը կառավարեց Տիգրան 4րդը,ի՞նչ վախճան ունեցավ Արտաշեսյան արքայատունը: Նոր նյութը հաղորդելուց հետո ուսուցիչը աշակերտների հետ միասին պարզում են արքայատան անկման պատճառները: Հանձնարարվում է դիագնոստիկ և գծագրային աշխատանքներ,որի ընթացքում կատարվում է

Տես՝

		նյութի ամրապնդում,որից հետո« մարդուկ»մեթոդով ընդանրացնում են իրենց ստացած գիտելիքները և հմտությունները:
Գնահատում	Ուսուցանող գնահատում Կիրականացնեմ միավորային գնահատում	
Տնային հանձնարարություն	Կհանձնարարեմ պատրաստել լրացուցիչ նյութ ռեֆերատի տեսքով թեմայի վերաբերյալ:	

Այս դասապլանում ներկայացված է Հայոց պատմություն առարկան, որտեղ ներկայացված է «Մեծ Հայքի թագավորությունը վերջին Արտաշեսյանների օրոք» թեման,ուր առաջադրված է ուղղորդված

նպատակ՝

իմանալ՝

ա)Ո՞վ է հաջորդել Արտավազդ II-ին հայոց գահին:

բ)Ի՞նչ ներքին և արտաքին բարեփոխումներ կատարեց Արտաշես II-ը:

գ)Ովքե՞ր էին Արտաշեսյան վերջին գահակալները:

դ)Ինչը՞ պատճառ հանդիսացավ Արտաշեսյան արքայատան անկման համար: Որպեսզի ես կարողանամ հասնել իմ առջև դրված նպատակին՝այն է,փորձել սովորողի մոտ ձևավորել հայրենասիրական նկրտումներ, թե ինչպես կարելի է պայքարել սեփական երկրի անվտանգության և ազգայինի պահպանման համար՝ ընդդեմ թշնամու,(նշեմ, որ թեման բավականին արդիական է, քանի որ, եթե հին շրջանում հայը պայքարում էր Հռոմի և

Տես՝

Պարթևստանի դեմ, ապա այսօր՝ արդի ժամանակներում, մեզ սպառնում է մահմեդական վայրի աշխարհը՝ ի դեմս Ադրբեջանի), ապա այս թեմայի մատուցումն իրականացնելու եմ սահիկաշարի, դիագնոստիկ մեթոդի,Վենի դիագրամի և մարդուկ մեթոդի միջոցով: Սահիկաշարի միջոցով սովորողներին ներկայացնելու եմ Արտաշեսյան տան վերջին գահակալների լուսանկարները, նրանց որոշ գործառույթներ, որը ավելի պատկերավոր կդարձնի թեման, որից հետո դիագնոստիկ մեթոդով,այսինքն՝ թերթիկների վրա գրելու եմ 4 ուղղորդող հարցեր, որոնք ներկայացված էին նպատակի մեջ, և հանձնարարելու եմ 7 րոպե ժամանակ հարցերին պատասխանելու համար, որից հետո Վենի դիագրամի միջոցով ուղիղ համեմատական է անցկացվելու Արտաշեսյան Հայաստանի և այսօրվա Հայաստանի միջև: Թեմայի կշռադատման փուլում կկիրառեմ «մարդուկ» մեթոդը,որի ժամանակ ստուգվում է սովորողների՝ թեմայի ընկալման աստիճանը:



Տես՝

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Այսպիսով, կրթության գործառույթները պետք է նպատակաուղղված լինեն անհատի ձևավորմանն ու նրա ունակությունների և կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հասարակության մտավոր ներուժի ձևավորմանը՝ ի նպաստ պետության կայուն զարգացման: Հետևաբար, կրթության զարգացման ոլորտում էական նշանակություն ունի ներդրումների արժեքային համակարգի կատարելագործումը: Կրթության համակարգում կատարվող ներդրումներն իրենց ծավալով և նշանակությամբ մարդկային կապիտալի ձևավորման հիմնական գործոններից են: Իսկ բարձրագույն կրթության մեջ կատարվող ներդրումները նպաստում են մրցունակ մասնագետների ձևավորմանը, որոնց բարձր որակավորում ունեցող աշխատանքն առավել մեծ ներգործություն է ունենում տնտեսական աճի տեմպերի վրա. ի տարբերություն արդյունաբերական նյութականացված ռեսուրսի՝ մտավոր ռեսուրսը չի սպառվում,

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին։Չ՞է,որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը[4]։

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։ Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին։ Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը[5]։

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

---

[4] Տես՝ Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

[5] Դուկասյան Ա.Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում։ Ուսուցչի ձեռնարկ։ էջ 6 Տես՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[6]:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն)

[6] Տես՝ Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112
Տես՝

առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ[7]:

Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությանը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին:

Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրն է՝ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջացմանը:2 Հետևաբար ,մնում է պարզել ինչ են իրենցից ներկայացնում արժեքն ու արժեհամակարգը: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունն ու6 օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ: Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական

[7] Դուկասյան Ա.Հայոց պատմություն 8-9 դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 12 Տես՝

նշանակությունն է։ Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են՝ հավատն ու սերը։

Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային

Տես՝

նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:

Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված

Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

Նպաստել մարդասիրությն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:
- Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:
- Ձևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ.

- Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ
- Զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլն):

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելու է, որ ազգային դպրոցներն առաջ երթան»1: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժ-դաստիարակներով: Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը՝ իր ժանրային

բազմազանությամբ, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության, բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը:

Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

21-րդ դար. հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա էթնոկիրը: Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը: Լիարժեք էթնոկրի անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով և սկսած տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով ու ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով: Այս տեսանկյունից 21-րդ դարն էլ բացառություն չէ: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններն ունեցան իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվեցին երկրորդական պլան. դյուրին և հեշտընկալ դարձան համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն ունեցան

երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները:Այսինքն՝ էթնոմշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին տեղեկատվության համար: Վերոնշյալ խնդրի հաղթահարման գործը դրված է նոր սերնդի ուսերին: Որքան փոփոխական են խնդիրները, այնքան կայուն է դրանք լուծելու անհրաժեշտությունը: Ուստի այս սերունդը տարբերվում է ոչ միայն առաջադիր խնդիրներով, այլև վերջիններս հաղթահարելու եղանակներով ու արդյունքներով: Հետևաբար, արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Հայոց պատմության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան:

Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և

համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգայինհասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Ազգային և համամարդկային արժեքների հարաբերությունը նոր սերնդի դաստիարակության գործում ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները1: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև: Ամփոփելով վերը նշված ամբողջ գաղափարախոսությունները՝ հարկ եմ համարում շեշտել այն միտքը, որ յուրաքանչյուր ուսուցիչ իր մանկավարժական ամբողջ գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի այն գաղափարով, որ ժամանակակից անհատի և քաղաքացու արժեհամակարգի ձևավորման հիմնաքար դնողը ինքն է և պատասխանատվությամբ

մոտենալով իր գործին պետք է ապահովի կայուն արժեհամակարգ, որի շնորհիվ սովորողը պատրաստ կլինի հարափոփոխ իրականության մեջ հանդուրժող վերաբերմունք ունենալ սեփական և այլ մշակույթների նկատմամբ և ապրել արժանապատիվ կյանքով:

---

1 И. К. Кучмаева, Культурное наследие. Современные проблемы, М., 1987, с.12.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search
2. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview
3. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ.:
4. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երևան, 2014 թ.:
5. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:
6. Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, Ամարաս, 2006թ.:
7. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
8. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:
9. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:
10. Բաբանսկի Յու Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում:.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:
11. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երևան 1986

12. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978.

13. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979.

14. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.,

15. Արժանապատվություն, հանդուրժողականություն /ՄԱԿ – Ձեռնարկ ավագ դպրոցի համար/